

ԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ ԵՐԿՆՔԻՑ ԿԿԱԽՎԵՆ ՎԱՐԴԵՐ

Երբ նա՝ փոքրիկ ու զմայելի թագավորագնը, դեռ ընդամենը մանկիկ էր, աշխարհում ամեն ինչ ձանձրալի էր ու միապաղաղ: Օրինակ, կա՞ր միթե ավելի տաղտկալի փաստ, քան այն, որ մարդկանց գլխավերևում երկինքն է և ոչ թե, ասենք, գետինը, և որ այդ երկինքը միշտ էլ կապույտ է և ոչ թե, ասենք, կարմիր կամ կանաչ:

Եվ իսկապես, մի՞թե հետաքրքրություն կարող էր ներկայացնել այն փաստը, որ խոտը ծլում է գարնանը և դուրս է գալիս հողի տակից, երբ... փոքրիկ զմայելին պառկած է տաք լողասենյակում՝ փրփուրների մեջ, օծվում է վարդաջրով ու խմում է տաք շոկոլադ: Ա՛հ, ինչո՞ւ ոչ մի նորություն չկա աշխարհիս երեսին և ո՞րն է ապրելու, իմաստը և ինչո՞ւ է ամեն ինչ նույնը, ամեն օր՝ նույնը, երբ փոքրիկ իշխանը ձանձրությից ասում է ամեն ինչ և օրեցօր ավելի է դառնում զմայելի և հագնվում է, ճիշտ ինչպես իր իշխան հայրը տաք, թանկարժեք ու գեղեցիկ հագուստներ... Ահա շողշողում է ոսկե կրծքազարդը փոքրիկ իշխանի փողկապին, և նա ավելի ու ավելի է տառապում ձանձրության զգացումով, թե ինչո՞ւ են, օրինակ, գետերը միշտ հոսում, իսկ ծառերը միշտ կանգնած են...

Խեղճ բարեկամ իմ, փոքրիկ իշխան, ինչպե՞ս է որ այսքան ձանձրալի է կյանքը և ոչ մի նորություն չկա... Չմայլելին մտածեց, ձանձրացավ և քանի մտածեց՝ ձանձրացավ:

Բայց փառք Աստծո, երբ շատ մտածեց, որոշեց այսպես, երբ դառնա արդեն թագավոր, և թագ դնեն իր գլխին՝ վերափոխի աշխարհը, երկրի երեսից վտարի ձանձրության ու աշխարհը լցնի նորություններով: Այսպես, օրինակ, այն ժամանակ վարդերն ու փշատները կաճեն ոչ թե ծառերին և ոչ թե արևոտ օրերին, և ոչ թե մարդիկ վարդերը կնվիրեն միմյանց իբրև սիրո նշան և ոչ թե կուտեն փշատը իբրև զարմանալի մի միրգ՝ կորիզավորների ցեղից... Այլ... նախ և առաջ՝ ոչ թե վարդերն ու փշատները, այլ մի ուրիշ բան, և ոչ թե ծառերին, այլ ամպերի մեջ, և դաժան սառնամանիքի ու փոթորկի օրերին, և ոչ թե կնվիրեն, այլ կշարտեն իբրև վիրավորանքի ու ատելության նշան, փշատն էլ ոչ թե կուտեն, այլ նրա զարմանալի կորիզը միայն կլողացնեն սագերի-սագիկների հետ, որ հետո ծնվեն նապաստակներ...

Օ, կդառնա աշխարհը նորագգեստ...

Սևամորթները կդառնան սպիտակամորթ, սպիտակները՝ սև ձնծաղիկը կդառնա երեքնուկ, երեքնուկը՝ ձնծաղիկ, մեռնողները կծնվեն, ծնվողները կմեռնեն և այլն, և այլն: Եվ այսպես, աշխարհն ունեցավ իր հետաքրքիր, շոնդալից, հոյակապ ապագան մեր փոքրիկ, մեկ տարեկան իշխանի

երագանքներում:

Եվ երբ տասնութ տարի հետո փոքրիկ իշխանը դարձավ մեծ թագավոր, հրամայեց.

– Աստղե՛ր, իջեք երկնքից և կայծկլտացեք հողի երեսին, իսկ դու, սերմնացամն, ցանի՛ր ցորենը երկնքի ակոսներում և ձմռանը կհնձես երկինքը...

Եվ մի ակնթարթ միայն սպասեց մեծ արքան... Բայց աստղերը չիջան, ցորենահատիկները չթռան երկինք... Եվ ի՞նչ, թագավորը ձանձրացավ սպասելուց և հետո մտածեց, որ թեկուզ կատարվեր էլ իր՝ փոքրիկ իշխան եղած ժամանակների երագանքը, ի՞նչ մի զարմանալի բան կլիներ որ...

...Արքան հորանջեց և ընկղմվեց օճառաջրի մեջ...

Մի խոշոր փրփուր-պղպջակ ուռեց-ուռեց, ուզեց մտնել թագավորի աչքը, որ նա տեսնի, թե՛ օրինակ ինքը իր փրփուր տեղով ինչքա՛ն հետաքրքիր է, և... ուր թե մնաց ողջ աշխա՛րհը:

Բայց թագավորը աչքերը փակ ննջում էր, և երբեք էլ չտեսավ, թե ինչքա՛ն հետաքրքիր է պղպջակն անգամ: Թագավորը քնեց:

Եվ օճառի փրփուրը մտածեց, որ թագավոր-արքայի մարմինը միշտ իր նման փափուկ ու հոտավետ բաներով է օծվում, դրա համար էլ աշխարհը սաստիկ ձանձրալի է պարոն տեր թագավորի համար:

Պղպջակը քննադատեց ինքն իրեն և ուզեց ատել ինքն իրեն:

Բայց դե՛ ինչ օգուտ դրանից, ահա առանց այդ էլ ինքը բարակեց այնքան, որ կպայթի շուտով և մնաս բարո՛վ, հավետ հետաքրքիր և երբեք՝ ձանձրալի աշխարհ: